ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

«ՀԱՅՍԱՏԱՆԻ ՖԻԶԻԱԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԹԻՎ 3 ՀԱՐՑՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՆԻՍՏԻ
(արտահերթ)

ք.Երևան **28.08.2020թ.**

2020 թվականի օգոստոսի 28–ին տեղի ունեցավ Հոգաբարձուների խորհրդի հարցման կարգով էլեկտրոնային եղանակով արտահերթ նիստ: Հարցմանը պատասխանեց հոգաբարձուների խորհրդի (Խորհուրդ) 24 անդամներից 24–ը: Էլեկտրոնային հաստատումները կցվում են:

Հոգաբարձուների խորհրդի անդամ Անի Թադևոսյանը տեղեկացրեց, որ Ինստիտուտի և պետության միջև կա կնքված դրամաշնորհի պայմանագիր, որով նախատեսվում է վերանորոգման աշխատանքներ Ինստիտուտում, իսկ նախագծանախահաշվային փաստաթղթերը գտնվում են Քաղաքաշինության կոմիտեում կարծիքի և հայտնի չէ արդյոք հատկացված գումարի շրջանակում հնարավոր է ընդգրկված լինեն Ինստիտուտի կողմից ներկայացված Ինստիտուտի վերոնորոգման կարիք ունեցող այն տարածքները, որոնք ընդգրկված են շինարարարկան աշխատանքներում: Սակայն Ինստիտուտը պարզաբանում ներկայացրեց Հոգաբարձուների խորհրդին, որ դրամաշնորհով վերանորոգվող տարածքները չեն ներառում օգոստսի 28–ին Հոգաբարձուների խորհրդի հաստատմանը ներկայացված գումարի օգտոգործման շինարարական աշխատանքների մեջ ընդգրկվող տարածքները:

Ապահովված էր հարցման կարգով նիստի քվորումը:

Հարցման կարգով նիստի արձանագրությունը կազմեց Խորհրդի քարտուղար Անահիտ Ստեփանյանը:

Օրակարգ

1. 28.08.2020թ. Հոգաբարձուների խորհրդի թիվ 3 հարցման կարգով օրակարգի հաստատում:
2. Ինստիտուտի վերանորոգման համար 20 միլիոն գումարը գերազանցող գումարի օգտագործման թույլտվություն տալու մասին:

Օրակարգի առաջին և երկրորդ հարցերը հաստատել են Հոգաբարձուների խորհրդի 24 անդամներից 23–ը:

Խորհրդի նախագահ ***Ռոման Մուրադյան***

Խորհրդի քարտուղար ***Անահիտ Ստեփանյան***